ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ջերմուկ 19/սեպտեմբերի/2024 թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 11 անդամներ:

Բացակա էին Բաղդյան Ժիրայր, Կանոյան Կարմենը, Համբարձումյան Մխիթարը:

<u>Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին</u> համայնքի ղեկավարի տեղակալ Աշոտ Խաչատրյանը, գյուղական համայնքի ղեկավարի տեղակալ Աշոտ Խաչատրյանը, գյուղական բնակավայրերի վարչական ղեկավարներ Սևակ Մկրտչյանը և Արտակ Բագրատյանը, համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Արմինե Ղազարյանը, համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Արսեն Գասնիկյանը և առաջատար մասնագետ Անուշ Առաքելյանը:

<u>Նիստը վարում էր Ջերմուկ համայնքի ղեկավար Վահագն Արսենյանը</u>

<u>Նիստը արձանագրում էր Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոհար Թադևոսյանը</u>

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ՝ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ)

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի առաջին՝ 2024 թվականի սեպտեմբերի 19–ի նիստի հետևյալ *օրակարգը՝*

1.1. Ջերմուկ համայնքի 2024 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան

1.2. Ջերմուկ համայնքի 2024 թվականի բյուջեի փոփոխությունները հաստատելու՝ բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան

1.3. Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի հուլիսի 28-ի N 49-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.4. Մարինե Մայիսի Մկրտչյանին Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջին տեղակալի պաշտոնում նշանակելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.5. Ջերմուկ համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 21-ի N 37-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.6. Տեղական տուրքի գծով արտոնություն սահմանելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.7. Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասը օտարելու, աճուրդային եղանակով վաճառքի մեկնարկային գինն ու պայմանները հաստատելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Ա. Գառնիկյան

1.8. Դրամական օգնություն տրամադրելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Ա. Առաքելյան

1.9. Ջերմուկ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ----------9---------- Դեմ----------0---------- Ձեռնպահ----------2----------

Ա. Ավետիսյան
Ա. Հովսեփյան

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 51-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՄԻՆԵ ՂԱՋԱՐՅԱՆ)

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքի 2024 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----------9---------- Դեմ----------1---------- Ձեռնպահ----------1----------

Ա. Ավետիսյան Ա. Հովսեփյան

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 52-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ՝ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՄԻՆԵ ՂԱՋԱՐՅԱՆ)

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերի , 90-րդ հոդվածի 6-րդ մասի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի համաձայն՝

1. Ջերմուկ համայնքի 2024 թվականի բյուջեի եկամտային մասի վարչական գանձումներ՝«46-20-00-Համայնքը սպասարկող անասնաբուժական ծառայություններ», «46-13-00-ոռոգման ջրի մատակարարման ծառայություններ», «46-08-00-ճոպանուղու ծառայություններ», «28-50-00- այլ ոչ հարկային եկամուտներ» գործառնական նշանակության եկամտատեսակները համապատասխանաբար նվազեցնել 4.000.0, 2,596.5, 22,403,5 և 3,300.0 հազարական դրամներով, ընդամենը՝ բյուջեի եկամտային մասը նվազեցնել 32,3 մլն ՀՀ դրամով:

2. Ջերմուկ համայնքի 2024 թվականի բյուջեի ծախսային մասում վարչական մասի պահուստային ֆոնդի՝ բաժին 11, խումբ 01, դաս 02, ծրագիր 51, 210002-«ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ» գործառնական նշանակության ծախսերի

կատարման նախահաշվի «4891-պահուստային միջոցներ» տնտեսագիտական հոդվածը նվազեցնել 50,323.0 հազար ՀՀ դրամով՝ որից 25.0 մլն ՀՀ դրամն ուղղել համայնքի բյուջեի ֆոնդային մաս՝ համայնքի զարգացման հնգամյա և տարեկան աշխատանքային պլաններով 2024 թվականին նախատեսվելիք սուբվենցիոն (կապիտալ ծախսերի) ծրագրերի և միջոցառումների իրականացման համար, 25,323.0 հազար ՀՀ դրամ գումարով վարչական բյուջեի ծախսային մասում կատարել նվազեցում:

3. Տարբերության չափով՝ 6,977.0 հազար ՀՀ դրամով, նվազեցնել Ջերմուկ համայնքի ճոպանուղու ծախսերի կատարման նախահաշվի «4111-աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ», «4112-պարգևատրումներ, դրամական խրախուսումներ, հատուկ վճարներ», «4212- էներգետիկ ծառայություններ», «4234-տեղեկատվական ծառայություններ», «4235-կառավարչական ծառայություններ», «4251-շենքերի շինությունների ընթացիկ նորոգում և պահպանում», «4261-գրասենյակային նյութեր և հագուստ», «4264-տրանսպորտային նյութեր», «4269-հատուկ նպատակային նյութեր» տնտեսագիտական հոդվածները համապատաս-խանաբար 1,000.0, 1,000.0, 1,500.0, 400.0, 495.0, 500.0, 350.0, 1,632.0, 100.0 հազարական ՀՀ դրամներով:

4. Հաստատել Ջերմուկ համայնքի 2024 թվականի բյուջեի՝ սույն որոշմամբ կատարված փոփոխությունները՝ ի գիտություն ընդունել Ջերմուկ համայնքի 2024 թվականի բյուջեն՝ ս/թ սեպտեմբերի 20-ի դրությամբ՝

Ընդամենը՝ *եկամտային մաս՝ 951,839.0 հազար ՀՀ դրամ*

ծախսային մաս՝ 951,839.0 հազար ՀՀ դրամ

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----------9 *Դեմ*----------0 *Ձեռնպահ*----------2

Ա. Ավետիսյան
Հ. Հովակիմյան

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 53-Ն/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 28-Ի N 49-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 34-րդ հոդվածով՝

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի հուլիսի 28-ի «Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթների կազմակերպման համար ստեղծել մրցութային հանձնաժողով ստեղծելու մասին»

N 49-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 1-ին կետով ձևավորված հանձնաժողովի կազմը շարադրել նոր՝ հետևյալ խմբագրությամբ՝

«հանձնաժողովի նախագահ՝ Աշոտ Խաչատրյան- համայնքի ղեկավարի տեղակալ

արձանագրող՝ Գոհար Թադևոսյան - համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար

անդամներ՝ Արսեն Գառնիկյան - համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետ

Աղասի Առաքելյան– համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ

Վահե Ղազարյան - համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ

Մխիթար Այվազյան- համայնքի ավագանու անդամ»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----9---------- *Դեմ*----2---------- *Ձեռնպահ*----0----------

Ա. Ավետիսյան
Ա. Հովսեփյան

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 54-Ա/

Լսեցին

ՄԱՐԻՆԵ ՄԱՅԻՍԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

(Զեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ)

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1. Ջերմուկ համայնքի ավագանու անդամ Մարինե Մայիսի Մկրտչյանին նշանակել Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջին տեղակալի պաշտոնում:

2. Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջին տեղակալի գործառույթները սահմանված են «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով և «ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությամբ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և գործողության մեջ է դրվում 2024 թվականի սեպտեմբերի 23-ից:

Կողմ----0---------- *Դեմ*----9---------- *Ձեռնպահ*----0----------

Արսեն Գառնիկյան՝ չի քվեարկել
Մարինե Մկրտչյան՝ չի քվեարկել

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 55-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 21-Ի N 37-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ)

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա՝

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 21-ի ««Լիդիան Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար հողամասի սերվիտուտ սահմանելու համաձայնություն տալու մասին» N 37-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝ որոշման 1-ին կետում «1,1842» թիվը փոխարինել «1,22674» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----10---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----1----

Ա. Ավետիսյան

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 56-Ա/

Լսեցին

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի պահանջներով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1. Ջերմուկ համայնքի բնակիչ Գայանե Վահանի Բաբայանի կողմից Ջերմուկ քաղաքի քաղաքային այգու տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության համար սահմանել տեղական տուրքի գծով արտոնություն՝

ա/ 2024 թվականի հունիս–օգոստոս ամիսների համար տեղական տուրքի դրույքաչափի նվազեցում 80 տոկոսի չափով,

բ/ 2024 թվականի սեպտեմբեր–դեկտեմբեր ամիսներին համար ազատել հաշվարկված տեղական տուրքի վճարումից:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----1---- *Դեմ*----9---- *Ձեռնպահ*----1----

Ա. Ավետիսյան Ա. Հովակիմյան

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 57-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՕՏԱՐԵԼՈՒ, ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՎԱՃԱՌՔԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՍԵՆ ԳԱՌՆԻԿՅԱՆ)

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի «գ» ենթակետին և 22-րդ կետին համապատասխան՝

1. Համաձայնություն տալ Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Մաշտոցի փողոցի 4-րդ փակուղու N 23/1 հասցեում գտնվող 10-002-0029-0102 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 12082024-10-0007) հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, մակերեսը՝ 0,00485 հա) բնակելի նշանակության շինություն կառուցելու նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 145000 (հարյուր քառասունհինգ հազար) դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----9---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----2----

Ա. Ավետիսյան
Ա. Հովակիմյան

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 58-Ա/

Լսեցին

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՆՈՒՇ ԱՌԱՔԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերով, Ջերմուկ համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները, այդ լիազորությունների իրականացման կարգը և չափորոշիչները սահմանելու և Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 19-ի N 12-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 52-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով մշակույթի, կրթության, սպորտի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի դրական եզրակացությունն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1. Ջերմուկի համայնքի 2024 թվականի բյուջեի «Սոցիալապես անապահով անձանց աջակցություն» /4729/ հոդվածից՝

ա/ 300000-ական (երեք հարյուր հազարական) դրամ ֆինանսական օգնություն տրամադրել Ջերմուկ համայնքի բնակիչներ Նազիկ Վլադիմիրի Աբգարյանին, Հրանուշ Արտեմի Հակոբյանին, Մանուշակ Արտավազդի Ղուկասյանին, Իշխան Լուսեղենի Անդրեասյանին, և Թագուհի Բորիսի Շահբազյանին,

բ/ 200000-ական (երկու հարյուր հազարական) դրամ՝ Կամո Ռաֆիկի Թադևոսյանին, Արման Բենիկի Թադևոսյանին և Նորայր Սահակի Համոբյանին,

գ/ 150000-ական (հարյուր հիսուն հազարական) դրամ՝ Աստղիկ Նաիրիի Հարությունյանին և Լիա Յուրիկի Ալեքսանյանին

դ/ 100000-ական (հարյուր հազարական) դրամ՝ Ջեմմա Բենիամինի Ասլանյանի, Լիլիթ Անդրանիկի Խաչատրյանին և Արփինե Ապրեսի Առուստամյանին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----11---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 59-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով՝

1. Ջերմուկ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2024 թվականի հոկտեմբերի 24-ին, ժամը՝ 15.00-ին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Կողմ----11---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 60-Ա/

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	ստորագրություն
Արսենյան Վահագն Աշոտի	
Սարգսյան Վարդան Ռաֆիկի	
Սարգսյան Լուսիկ Ժորայի	
Վարդազարյան Աննա Վասակի	
Խաչատրյան Գոհար Բաբկենի	
Համբարձումյան Մխիթար Սամվելի	բացակա
Այվազյան Մխիթար Վոլոդյայի	
Մկրտչյան Մարինե Մայիսի	
Բաբայան Ժիրայր Ժորայի	բացակա
Մնացականյան Արկադի Ալբերտի	
Գևորգյան Մանան Աղվանի	
Վահանյան Վարուժան Կնյազի	բացակա
Հովակիմյան Ազատ Հայրիկի	
Ավետիսյան Սյուզաննա Թաթուլի	

Ջերմուկ համայնքի ղեկավար՝

Վահագն Արսենյան _____

Նիստն արձանագրեց՝ Գոհար Թադևոսյանը _____